# ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ԱՄՄՔ-ԳՀ-ԱՇՁԲ-17/22

ք. Մասիս

«07» նոյեմբերի 2017թ.

Մասիսի քաղաքապետարանը, ի դեմս քաղաքապետ Դ. Համբարձումյանի, որը գործում է քաղաքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԲՈԼՈՐԱԿ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Թադևոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված << Արարատի մարզի Մասիս քաղաքի ն/թ թթ. 9, 18, 23, 30, 36 և 3-րդ թաղամասի թթ. 9, 16 շենքերի բակերի կոյուղագծերի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են << օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագրի կնքման օրվանից մինչև 20 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

### 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ << օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ)Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը

...խարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում` այդ մասին ...ապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին ...րամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու ...եպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի`

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու ...եպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված` վճարման ենթակա ...ումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում ...ատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով ...ախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է`

3.4.1 Աշխատանքների առնվազն 80 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով ... ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու ...ատշաճ որակով` նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն ...ակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ... տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման ...էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, ...անակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և ...անոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ ...տագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները ...ահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և ...ատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել ...շխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել ...այմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել ...ատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում` իր միջոցներով ...ատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ...ղջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար ...ահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ...պա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում ...երացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով ...շխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե ...աշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա ...ապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել ...րությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի ...աշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – ...ավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ ...անկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման ...րձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է ...ատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով` նշելով փաստաթղթի կազմման ...մսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն ...ատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված` աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ...ավող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ...ործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ...էլեկտրոնային գնումներ» բաժնում)` նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ ...ում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ...որագրությամբ` լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը

տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 5 487 000 (հինգ միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար) ՀՀ դրամ, որից 914 500 (ինը հարյուր տասնչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.
ա շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.
4S-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.
Ֆ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.
ՀԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ հազարերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը տևում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից բխած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասները՝ հաշվի առնելով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Մասիս համայնքապետարան | <<Բոլորակ>> ՍՊԸ |
| Ք.Մասիս Կենտրոնական հր. Թիվ 4 | Ք. Մասիս 3-րդ թաղ. 2-րդ շենք 34 բն. |
| ՀՀ Ֆինանսների նախարարություն | h/h 2472900238340010 |
| Հ/Հ 900 432 450 055 | <<Արդշինբանկ>> ՓԲԸ Մասիս մ/ճ |
| ՀՎՀՀ 03801428 | ՀՎՀՀ 03809153 |

Դ. Համբարձումյան _____
/ստորագրություն/
Կ.Տ.

Ա. Թադևոսյան _____
/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված թիվ 1*
*«07» նոյեմբերի 2017 թ. կնքված*
*ԱՄՄՔ-ԳՀ-ԱՇՁԲ-17/22 ծածկագրով պայմանագրի*

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
## ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ Ն/Թ ԹԹ. 9, 18, 23, 30, 36 ԵՎ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԹ. 9, 16 ՇԵՆՔԵՐԻ ԲԱԿԵՐԻ ԿՈՅՈՒՂԱԳԾԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| ՀՀ | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չ/Մ | Քանակ | Հազ. դրամ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Միավորի արժեքը | Ընդամենը |
| | **ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի ն/թ 9 շենքի բակի կոյուղագծի հիմնանորոգում** | | | | |
| 1 | Ասֆալտե ծածկույթի քանդում | մ3 | 1,6 | 3,117 | 4,987 |
| 2 | Խրամուղու փորում 3-րդ կարգի գրունտում ձեռքով | մ3 | 4 | 1,802 | 7,209 |
| 3 | Գրունտի հետլիցք ձեռքով և տոփանում | մ3 | 2,8 | 0,918 | 2,570 |
| 4 | Ավելորդ գրունտի բարձում ձեռքով ա/ինքնաթափերի վրա | մ3 | 3,4 | 0,869 | 2,953 |
| 5 | Շին աղբի բարձում և տեղափոխում 13կմ | տ | 5,44 | 2,679 | 14,576 |
| 6 | Խճի շերտի պատրաստում սալվածքի տակ h=10սմ | մ2 | 20 | 1,119 | 22,387 |
| 7 | Ասֆալտի ծածկույթի իրականացում 4սմ խոշորահատիկ | մ2 | 20 | 3,153 | 63,058 |
| 8 | Ասֆալտի ծածկույթի իրականացում 4սմ մանրահատիկ | մ2 | 20 | 2,884 | 57,689 |
| 9 | Բետոնե նախապատրաստական շերտի քանդում h=100մմ | մ3 | 1 | 12,910 | 12,910 |
| 10 | Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B12,5 | մ3 | 1 | 26,829 | 26,829 |
| 11 | Կոյուղու խողովակների ապամոնտաժում Φ150մմ տրամագծով | գմ | 15 | 0,711 | 10,662 |
| 12 | Նույնը Φ110մմ տրամագծով | գմ | 15 | 0,688 | 10,320 |
| 13 | Կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակների մոնտաժում Φ150 | մ | 15 | 2,372 | 35,581 |
| 14 | Պոլիվինիլքլորիդե, կոյուղու համար, d=110մմ, պատի հաստ. 3,2մմ; L=1000մմ | մ | 15 | 2,507 | 37,607 |
| 15 | Պլաստմասե ձևավոր մաս. | հ-տ | 10 | 1,798 | 17,980 |
| 16 | Ե/բ-ից կլոր դիտահորեր D=1000մմ H=1,5մ | մ3 | 2,02 | 60,365 | 121,938 |
| 17 | Ստուգիչ Φ110 | հ-տ | 2 | 3,621 | 7,243 |
| 18 | Ցանցի փորձարկում | գմ | 30 | 0,295 | 8,864 |
| 19 | Կոյուղու դիտահորի թուջե կափարիչ | հատ | 1,0 | 31,875 | 31,875 |
| | **Ընդամենը** | | | | **497,238** |
| | **ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի ն/թ 18 շենքի բակի կոյուղագծի հիմնանորոգում** | | | | |
| 1 | Բետոնե նախապատրաստական շերտի քանդում h=100մմ | մ3 | 1 | 12,91 | 12,910 |
| 2 | Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B12,5 | մ3 | 1 | 26,83 | 26,829 |
| 3 | Կոյուղու խողովակների ապամոնտաժում Φ110մմ տրամագծով | գմ | 20 | 0,69 | 13,760 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4 | Պոլիվինիլքլորիդե, կոյուղու համար, d=110մմ, պատի հաստ. 3,2մմ; L=1000մմ | մ | 20 | 2,51 | 50,143 |
| 5 | Պլաստմասե ձևավոր մաս. | հ-տ | 10 | 1,80 | 17,980 |
| 6 | Ստուգիչ Φ110 | հ-տ | 4 | 3,62 | 14,486 |
| 7 | Ցանցի փորձարկում | գմ | 20 | 0,30 | 5,909 |
| | **Ընդամենը** | | | | **142,017** |
| | << Արարատի մարզի Մասիս քաղաքի ն/թ 23 շենքի բակի կոյուղագծի հիմնանորոգում | | | | |
| 1 | Խրամուղու փորում 3-րդ կարգի գրունտում ձեռքով | մ3 | 6 | 1,80 | 10,814 |
| 2 | Գրունտի հետլիցք ձեռքով և տոփանում | մ3 | 4 | 0,92 | 3,854 |
| 3 | Ավելորդ գրունտի բարձում ձեռքով ա/ինքնաթափերի վրա | մ3 | 3,4 | 0,87 | 2,953 |
| 4 | Հին աղբի բարձում և տեղափոխում 13կմ | տ | 5,44 | 2,68 | 14,576 |
| 5 | Խճի շերտի պատրաստում սալվածքի տակ h=10սմ | մ2 | 50 | 1,12 | 55,967 |
| 6 | Ասֆալտի ծածկույթի իրականացում 4սմ խոշորահատիկ | մ2 | 50 | 3,15 | 157,646 |
| 7 | Ասֆալտի ծածկույթի իրականացում 4սմ մանրահատիկ | մ2 | 50 | 2,88 | 144,224 |
| 8 | Բետոնե նախապատրաստական շերտի քանդում h=100մմ | մ3 | 1 | 12,91 | 12,910 |
| 9 | Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B12,5 | մ3 | 1 | 26,83 | 26,829 |
| 10 | Կոյուղու խողովակների ապամոնտաժում Φ150մմ տրամագծով | գմ | 15 | 0,71 | 10,662 |
| 11 | Նույնը Φ110մմ տրամագծով | գմ | 15 | 0,69 | 10,320 |
| 12 | Կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակների մոնտաժում Φ150 | մ | 15 | 2,37 | 35,581 |
| 13 | Պոլիվինիլքլորիդե, կոյուղու համար, d=110մմ, պատի հաստ. 3,2մմ; L=1000մմ | մ | 15 | 2,51 | 37,607 |
| 14 | Պլաստմասե ձևավոր մաս. | հ-տ | 10 | 1,80 | 17,980 |
| 15 | Ստուգիչ Φ110 | հ-տ | 4 | 3,62 | 14,486 |
| 16 | Ցանցի փորձարկում | գմ | 30 | 0,30 | 8,864 |
| 17 | Կոյուղու դիտահորի թուջե կափարիչ | հատ | 1,0 | 31,88 | 31,875 |
| | **Ընդամենը** | | | | **597,147** |
| | << Արարատի մարզի Մասիս քաղաքի ն/թ 30 շենքի բակի կոյուղագծի հիմնանորոգում | | | | |
| 1 | Խրամուղու փորում 3-րդ կարգի գրունտում ձեռքով | մ3 | 2 | 1,80 | 3,605 |
| 2 | Գրունտի հետլիցք ձեռքով և տոփանում | մ3 | 1 | 0,92 | 1,285 |
| 3 | Ավելորդ գրունտի բարձում ձեռքով ա/ինքնաթափերի վրա | մ3 | 1,7 | 0,87 | 1,477 |
| 4 | Հին աղբի բարձում և տեղափոխում 13կմ | տ | 2,72 | 2,68 | 7,288 |
| 5 | Խճի շերտի պատրաստում սալվածքի տակ h=10սմ | մ2 | 10 | 1,12 | 11,193 |
| 6 | Ասֆալտի ծածկույթի իրականացում 4սմ խոշորահատիկ | մ2 | 10 | 3,15 | 31,529 |
| 7 | Ասֆալտի ծածկույթի իրականացում 4սմ մանրահատիկ | մ2 | 10 | 2,88 | 28,845 |
| 8 | Բետոնե նախապատրաստական շերտի քանդում h=100մմ | մ3 | 0,5 | 12,91 | 6,455 |
| 9 | Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B12,5 | մ3 | 0,5 | 26,83 | 13,414 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10 | Կոյուղու խողովակների ապամոնտաժում Φ110մմ տրամագծով | գմ | 5 | 0,69 | 3,440 |
| 11 | Պոլիվինիլքլորիդե, կոյուղու համար, d=110մմ, պատի հաստ. 3,2մմ; L=1000մմ | մ | 10 | 2,51 | 25,071 |
| 12 | Պլաստմասե ճնավոր մաս. | հ-տ | 5 | 1,80 | 8,990 |
| 13 | Ստուգիչ Φ110 | հ-տ | 2 | 3,62 | 7,243 |
| 14 | Ցանցի փորձարկում | գմ | 10 | 0,30 | 2,955 |
| 15 | Ե/բ-ից կլոր դիտահորեր D=1000մմ H=1,5մ | մ3 | 1,02 | 60,37 | 61,573 |
| 16 | Ստուգիչ Φ110 | հ-տ | 1 | 3,62 | 3,621 |
| 17 | Կոյուղու դիտահորի թուջե կափարիչ | հատ | 1,0 | 31,88 | 31,875 |
| | **Ընդամենը** | | | | **249,859** |
| | << Արարատի մարզի Մասիս քաղաքի ն/թ 36 շենքի բակի կոյուղագծի հիմնանորոգում | | | | |
| 1 | Ասֆալտե ծածկույթի քանդում | մ3 | 1,6 | 3,12 | 4,987 |
| 2 | Խրամուղու փորում 3-րդ կարգի գրունտում ձեռքով | մ3 | 4 | 1,80 | 7,209 |
| 3 | Գրունտի հետլիցք ձեռքով և տոփանում | մ3 | 3 | 0,92 | 2,569 |
| 4 | Ավելորդ գրունտի բարձում ձեռքով ա/ինքնաթափերի վրա | մ3 | 3,4 | 0,87 | 2,953 |
| 5 | Շին աղբի բարձում և տեղափոխում 13կմ | տ | 5,44 | 2,68 | 14,576 |
| 6 | Խճի շերտի պատրաստում սալվածքի տակ h=10սմ | մ2 | 10 | 1,12 | 11,193 |
| 7 | Ասֆալտի ծածկույթի իրականացում 4սմ խոշորահատիկ | մ2 | 10 | 3,15 | 31,529 |
| 8 | Ասֆալտի ծածկույթի իրականացում 4սմ մանրահատիկ | մ2 | 10 | 2,88 | 28,845 |
| 9 | Բետոնե նախապատրաստական շերտի քանդում h=100մմ | մ3 | 1 | 12,91 | 12,910 |
| 10 | Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B12,5 | մ3 | 1 | 26,83 | 26,828 |
| 11 | Կոյուղու խողովակների ապամոնտաժում Φ150մմ տրամագծով | գմ | 10 | 0,71 | 7,108 |
| 12 | Նույնը Φ110մմ տրամագծով | գմ | 10 | 0,69 | 6,880 |
| 13 | Կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակների մոնտաժում Φ150 | մ | 10 | 2,37 | 23,721 |
| 14 | Պոլիվինիլքլորիդե, կոյուղու համար, d=110մմ, պատի հաստ. 3,2մմ; L=1000մմ | մ | 10 | 2,51 | 25,071 |
| 15 | Պլաստմասե ճնավոր մաս. | հ-տ | 10 | 1,80 | 17,980 |
| 16 | Ե/բ-ից կլոր դիտահորեր D=1000մմ H=1,5մ | մ3 | 2,02 | 60,37 | 121,938 |
| 17 | Ստուգիչ Φ110 | հ-տ | 2 | 3,62 | 7,243 |
| 18 | Կոյուղու դիտահորի թուջե կափարիչ | հատ | 2,0 | 31,88 | 63,750 |
| 19 | Ցանցի փորձարկում | գմ | 20 | 0,30 | 5,909 |
| | **Ընդամենը** | | | | **423,201** |
| | << Արարատի մարզի Մասիս քաղաքի 3-րդ թաղ 9,16 շենքի բակի կոյուղագծի հիմնանորոգում | | | | |
| 1 | Ասֆալտե ծածկույթի քանդում | մ3 | 8 | 3,12 | 24,933 |
| 2 | Խրամուղու փորում 3-րդ կարգի գրունտում ձեռքով | մ3 | 50 | 1,80 | 90,113 |
| 3 | Գրունտի հետլիցք ձեռքով և տոփանում | մ3 | 35 | 0,92 | 32,116 |
| 4 | Ավելորդ գրունտի բարձում ձեռքով ա/ինքնաթափերի վրա | մ3 | 20,9 | 0,87 | 18,148 |
| 5 | Շին աղբի բարձում և տեղափոխում 13կմ | տ | 33,6 | 2,68 | 90,026 |
| 6 | Խճի շերտի պատրաստում սալվածքի տակ h=10սմ | մ2 | 55 | 1,12 | 61,564 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7 | Ասֆալտի ծածկույթի իրականացում 4սմ խոշորահատիկ | մ2 | 55 | 3,15 | 173,410 |
| 8 | Ասֆալտի ծածկույթի իրականացում 4սմ մանրահատիկ | մ2 | 55 | 2,88 | 158,646 |
| 9 | Բետոնե նախապատրաստական շերտի քանդում h=100մմ | մ3 | 1 | 12,91 | 12,910 |
| 10 | Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B12,5 | մ3 | 1 | 26,83 | 26,829 |
| 11 | Կոյուղու խողովակների ապամոնտաժում Φ150մմ տրամագծով | գմ | 70 | 0,71 | 49,754 |
| 12 | Նույնը Φ110մմ տրամագծով | գմ | 50 | 0,69 | 34,399 |
| 13 | Թեքում 100 Ɣ= 135° | հ-տ | 8 | 1,14 | 9,117 |
| 14 | Կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակների մոնտաժում Φ200 | մ | 75 | 3,13 | 234,886 |
| 15 | Կոյուղու պոլիվինիլքլորիդային խողովակների մոնտաժում Φ150 | մ | 75 | 2,37 | 177,905 |
| 16 | Պոլիվինիլքլորիդե, կոյուղու համար, d=110մմ, պատի հաստ. 3,2մմ; L=1000մմ | մ | 50 | 2,51 | 125,357 |
| 17 | Պլաստմասե ծնավոր մաս. | հ-տ | 20 | 1,80 | 35,961 |
| 18 | Ե/բ-ից կլոր դիտահորեր D=1000մմ H=1,5մ | մ3 | 8,26 | 60,37 | 498,619 |
| 19 | Ավազե շերտի իրականացում | մ2 | 40 | 0,56 | 22,286 |
| 20 | Կոյուղու դիտահորի թուջե կափարիչ | հատ | 6,0 | 31,88 | 191,251 |
| 21 | Ստուգիչ Φ110 | հ-տ | 6 | 3,62 | 21,729 |
| 22 | Ցանցի փորձարկում | գմ | 200 | 0,30 | 59,091 |
| | **Ընդամենը** | | | | **2149,05** |
| | **Ընդամենը** | | | | **4058,51** |
| | **Շահույթ 11%** | | | | **446,44** |
| | **Ընդամենը** | | | | **4504,95** |
| | **Չնախատեսված ծախսեր 1,5%** | | | | **67,57** |
| | **Ընդամենը** | | | | **4572,52** |
| | **ԱԱՀ 20%** | | | | **914,50** |
| | **Ամբողջը** | | | | **5487,0** |

Կապալառուն աշխատանքները կատարում է << Արարատի մարզի Մասիս քաղաքի Նոր թաղ. 9 շ., 18շ., 23շ., 30շ., 36շ. , 3-րդ թաղ. թթ. 9շ., 16շ. հասցեներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մասիս համայնքապետարան
Ք.Մասիս Կենտրոնական հր. Թիվ 4
<< Ֆինանսների նախարարություն
հ/հ 900 432 450 055
ՀՎՀՀ 03801428

Դ. Համբարձումյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Բոլորակ>> ՍՊԸ
Ք. Մասիս 3-րդ թաղ. 2-րդ շենք 34 բն.
հ/հ 2472900238340010
<<Արդշինբանկ>> ՓԲԸ Մասիսի մ/ճ
ՀՎՀՀ 03809153

Ա. Թադևոսյան
/ստորագրություն/
Կ.Տ